Գործ թիվ ԵԴ/9531/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 մարտի 2023թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով <<ԴՎՍ>> ՍՊԸ-ի հայցադիմումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<ԴՎՍ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ <<ԴՎՍ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.11.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Դատարանի 21.03.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Կրկին ներկայացված հայցադիմումը Դատարանում մուտքագրվել է 23.03.2023թ. և 24.03.2023թ. հանձնվել դատական կազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ

կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար, այն պետք է ընդունել վարույթ:

Միևնույն ժամանակ, Դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեից անհրաժեշտ է պահանջել թիվ <<ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/25>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 25.04.2023թ.՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

Պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեից պահանջել թիվ <<ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/25>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**